ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՄԻԿ ՋԻՎԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ (2000-ԱԿԱՆ ԹԹ.)

Ժ. 01. 04- «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ **Ջրբաշյան Աշխեն Էդուարդի**
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Էթարյան Ելենա Հովհաննեսի**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ղազարյան Ռուզան Ռաֆայելի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունիսի 29-ին՝ ժամը 12^{00}-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^{ա}, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ բանաս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից գեղարվեստական տեքստը հիմնականում կառուցված է այլ տեքստերի միջնորդությամբ, միջտեքստային դրսևորումներով, ուստի ընթերցողից ակնկալվում է որոշակի նախագիտելիք, որպեսզի նա կարողանա լիարժեք ընկալել տեքստը, դրա գաղափարը, նպատակն ու ասելիքը: Հաճախ մեջբերվող տեքստը բոլորովին այլ իմաստային արծարծում է ունենում, քան սկզբնաղբյուրում է, որովհետև՝ ա) փոխվել են հեղինակը և տեքստի կիրարկման նպատակը, բ) այլ է ժամանակը:

Այստեղից էլ առաջանում է միջտեքստային իրողությունները քննության ենթարկելու անհրաժեշտությունը, և հիմնավորվում է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել և տեսականորեն հիմնավորել միջտեքստայնության դրսևորումները, գործառույթներն ու տիպաբանությունը արդի հայ արձակում՝ բացահայտելով դրա դերը պատմական հիշողության, ինքնության և գեղարվեստական մտածողության վերակառուցման գործընթացում՝ քննության առանցքում ունենալով հետմոդեռնիստական արձակին բնորոշ առանձնահատկությունների և պատմագրական մետագեղարվեստականության ուսումնասիրությունների մասին առկա տեսական նյութը:

Ուսումնասիրության ընթացքում կարևորվել են մինչև օրս բավարար չափով չուսումնասիրված հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել «միջտեքստայնություն» հասկացությունը, դրա պատմական և տեսական հիմքերը, գրականագիտական, լեզվաբանական, կառուցվածքաբանական, փիլիսոփայական մոտեցումները, ինչպես նաև քննաբանել դրա կիրառման առանձնահատկություններն ու օրինաչափությունները՝ շեշտադրելով պատմագրական մետագեղարվեստականության տեսության վրա,

2. ներկայացնել և զուգահեռաբար վերլուծել երկխոսության մեջ մտած տեքստերը՝ ցույց տալու նախատեքստի գործառույթը հեղինակի ստեղծած նոր տեքստում, և թե որքանով է կողմնակի տեքստը՝ նախատեքստը, փոխել իր իմաստը հիմնական տեքստում,

3. անդրադառնալ պատմական փաստի և դրա գեղարվեստական անդրադարձի հարաբերություններին՝ ցույց տալով ստեղծագործություն-հեղինակ-ընթերցող փոխադարձ կապի առանձնահատկությունները և օբյեկտիվ-հեղինակային ու սուբյեկտիվ-ընթերցողական հակադրամիասնությունը, որով պայմանավորված է գեղարվեստական տեքստի զարգացումը,

4. ցույց տալ գեղարվեստականի և իրականի, պատմական փաստի ու անհատական փորձի փոխհարաբերությունները, պատմության և գրականության

երկխոսության համատեքստում միջտեքստայնության կիրառման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

5. տեսական նյութը հիմնավորել բնագրային վերլուծությամբ՝ քննության առանցքում ունենալով 2000-ականների հայ արձակի նմուշները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: «Միջտեքստայնություն» եզրույթն առաջին անգամ սահմանել է Յու. Կրիստևան 1967 թ.՝ հենվելով Ֆուկոյի՝ «տեքստը՝ որպես երկխոսություն» և Բախտինի՝ «միջտեքստայնության հիմքում ընկած է «օտար խոսքի» հայեցակարգը» գաղափարների հիման վրա[1]:

Յու. Լոտմանը ժամանակին առանձնացրել է նախատեքստի մի քանի գործառույթ: Ըստ նրա՝ նոր տեքստում նախատեքստը կարող է՝

" խաղալ իմաստային կատալիզատորի դեր,
" փոխել հիմնական իմաստը,
" աննկատ մնալ[2]:

Ֆրանսիացի հետկառուցվածքաբան Ռ. Բարտը գրական ստեղծագործության ընկալման հարցում ազդարարում էր հեղինակի մահը՝ բացարձակացնելով ընթերցողի դերը: Լինդա Հաթչոնը, Ռիֆաթերը, Ու. Էկոն և այլ տեսաբաններ ևս պաշտպանում էին այս մոտեցումը:

Ժերար Ժենետն առանձնացրել է միջտեքստայնության դրսևորման հետևյալ ենթատեսակները՝ *միջտեքստայնությունը*՝ իբրև տեքստերի համագոյակցում մեկ տեքստում, *պարատեքստայնություն* (տեքստի և վերնագրի հարաբերությունն է), *մետատեքստ* (իրենից առաջ ստեղծված տեքստերի ծանոթագրումը կամ քննությունն է գեղարվեստական հարթության մեջ), *հիպերտեքստայնություն* (մի տեքստը հիմք է դառնում մեկ այլ տեքստի), *արքետեքստայնություն* (տեքստի «ժանրային ինքնությունն»[3] է):

Հայ գրականագիտության մեջ միջտեքստայնությանն անդրադարձել են Ժ. Քալանթարյանը, Գ. Գիրունյանը, Ե. Էթարյանը, Ա. Բեքմեզյան-Սեմիրջյանը Ն. Համբարձումյանը, Ա. Նիկողոսյանը և այլք: Ժ. Քալանթարյանը կարևորել է պատրաստված, մշակութային գիտելիքների որոշակի պաշարով ընթերցողի դերը, որպեսզի կայանա տեքստ-ընթերցող «երկխոսությունը»: Ե. Էթարյանն անդրադարձել է «գրականության ինքնախորհրդածման» խնդրին՝ ներկայացնելով գրականության մետականացման հեռանկարը: Գ. Գիրունյանը քննել է անդրադարձի և միջտեքստայնության սահմանների որոշարկման հարցը՝ հենվելով Ջ. Բեն Փորաթի և Ել. Կոզիցկայայի առաջ քաշած դրույթների վրա:

---

[1] Кристева, Ю., // Бахтин, слово, диалог и роман // Французская семиотика: от структурализма к постструктурализму / пер. с фр., сост., вступ. ст. Г.К. Косикова. М.: ИГ Прогресс, 2000, с. 427-457.

[2] Տե՛ս Лотман Ю. М., Семиосфера, С.-Петербург: «Искусство—СПБ», 2000, с. 65-76.

[3] Տե՛ս Genette G., Palimpsests: Literature in the Second Degree, Lincoln NE and London, University of Nebraska Press, 1997.

Աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը պայմանավորված է թե՛ տեսական նյութի համադրություններով, թե՛ արդի հայ արձակի որոշ նմուշների նորովի ընթերցմամբ: Հետազոտության գիտական նորույթներն են.

- առաջին անգամ արդի հայ արձակում միջտեքստայնությունը դիտարկվում է ոչ միայն որպես գեղարվեստական հնարք, այլև որպես պատմական հիշողության և ինքնության կառուցման համակարգային ռազմավարություն,
- արդի հայ արձակի քննության համատեքստում կիրառվում է Լինդա Հաթչոնի առաջարկած պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը՝ բացահայտելով հայ և համաշխարհային հետմոդեռնիստական գրականության փոխկապակցվածությունը,
- միջտեքստայնությունը դիտարկվում է ոչ թե սոսկ ավանդական «տեքստերի խաղ», այլ որպես պատմության խեղաթյուրման, լռեցված անցյալի և քաղաքական բռնությունների վերաիմաստավորման միջոց: Այն ունի փաստավավերագրական գործառույթ, հատկապես եթե խոսքը պատերազմի, ցեղասպանության, խորհրդային բռնաճնշումների մասին է,
- առաջարկվում է արդի հայ արձակում միջտեքստայնության քննության նոր մոտեցում, որտեղ առանձնացվում են պատմագրական, ինքնակենսագրական, բանահյուսական և մետալեզվական միջտեքստային շերտերը:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Հետազոտությունը կառուցված է գիտական հետևյալ հարացույցների երկխոսության սկզբունքի հիման վրա՝ պոետիկա, հերմենևտիկա, ֆենոմենոլոգիա և սոցիոլոգիա[4]: Ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Ռիկյորի առաջարկած հերմենևտիկայի և ֆենոմենոլոգիայի համադրման՝ ֆենոմենոլոգիական հերմենևտիկայի միջոցով անդրադարձել ենք վեպի «պատմողական գործունեության» տարբեր ձևերին՝ փորձելով ցույց տալ, թե տեքստն ինչպես է գրվում, պատմվում և ընկալվում տարբեր սուբյեկտների կողմից: Սոցիոլոգիական հարացույցի օգնությամբ փորձել ենք բացահայտել արտատեքստային իրականության հետ տեքստի հարաբերությունը: Ըստ սոցիոլոգիական հարացույցի արդիականացման շնորհիվ առաջացած նոր պատմականության տեսության՝ տեքստը պատմական է, իսկ պատմությունը՝ տեքստային (այս մոտեցումն ընդունում է նաև պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը). տեքստը մտնում է կյանք և մոդելավորում նրա ընթացքը, կյանքը մտնում է տեքստ և որոշում նրա բովանդակությունը:

Կիրառվել են նաև *միջտեքստային վերլուծության, տեքստի վերլուծության* (narrative analysis), *պատմագրական մետագեղարվեստականության տեսության*, *համեմատական-պատմական* մեթոդները: Որոշակի տեղ է հատկացված Մ. Հիրշի հետհիշողության (postmemory) տեսության դրույթներին՝

[4] Տե՛ս Տուրիշևա Օ., Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2017:

ցույց տալու համար, թե միջտեքստայնությունը ինչպես է դառնում տրավմատիկ անցյալի փոխանցման և վերապրման մեխանիզմ:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել բուհական կրթության մեջ՝ ժամանակակից հայ գրականության, գրականության տեսության, հետմոդեռնիզմի և միջտեքստայնության ուսումնասիրությունների վերաբերյալ դասընթացների շրջանակներում: Աշխատանքում մշակված վերլուծական մոտեցումներն ու միջտեքստայնության տիպաբանությունը կարող են ծառայել որպես մեթոդական ուղեցույց՝ մագիստրոսական, ասպիրանտական և գիտական հետագա աշխատանքների համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել նաև ավագ դպրոցում գրականության ուսուցման ընթացքում՝ արդի հայ արձակի մեկնաբանման ժամանակ:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները 6 հոդվածների տեսքով տպագրվել են «ՎԷՄ», «Հայագիտական հանդես», «Գրականագիտական հանդես» և «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից: Առաջին՝ «Միջտեքստայնության պատմական և տեսական հիմքերը, հետմոդեռնիստական առանձնահատկությունները» գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, երկրորդ՝ «Միջտեքստայնությունը՝ որպես պատմագրական մետագեղարվեստականության մեխանիզմ» գլուխը՝ երեք ենթագլուխներից, երրորդ՝ «Աստվածաշնչյան, մշակութային և այլ հղումների հետմոդեռնիստական ընթերցումներ» գլուխը՝ չորս ենթագլուխներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 180 էջ է:

Ներածության մեջ ներկայացվել են թեմայի արդիականությունը, առաջադրված խնդիրները և նպատակները, հարցի պատմությունն ու գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության նպատակների ու խնդիրների պարզաբանմամբ հիմնավորվել է ատենախոսության արդիականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՀԵՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ատենախոսության առաջին գլխի այս ենթաբաժնում քննվել է միջտեքստայնության փիլիսոփայական հայեցակարգի ձևավորման հարցը՝ նշելով, որ դրա հիմքերը ձևավորվել են դեռ մինչև եզրույթի պաշտոնական սահմանումը.

նախադրյալներին անդրադարձել են Ֆերդինանդ դը Սոսյուրը, Միխայիլ Բախտինը և այլք:

Անդրադարձ է արվել տեսության զարգացման ընթացքում առաջ եկած հակասություններին, որոնք համակարգել է Հայնրիխ Պլետը: Նա տարբերակում է մոտեցման երեք հիմնական թև՝

. առաջադեմներ, որոնք զարգացնում են հետկառուցվածքաբանական գաղափարները և ընդգծում տեսության նորարար բնույթը,

. ավանդապաշտներ, որոնք փորձում են այն կիրառել կոնկրետ տեքստերի վերլուծության մեջ,

. հակաինտերտեքստուալիստներ, որոնք համարում են, թե երևույթը նոր չէ և վաղուց առկա է գրականագիտության մեջ:

Այս հատվածում քննվել են այնպիսի տեսաբանների մոտեցումներ, ինչպիսիք են Մայքլ Ռիֆաթերը, որն առաջ է քաշել «միջտեքստային դետերմինիզմի» գաղափարը (տեքստը հասկանալի է այլ տեքստերի միջոցով), և Ջոն Ֆրոուն, որը շեշտել է միջտեքստայնության պատմամշակութային բնույթը:

1.2. ԻՆՏԵՐՏԵՔՍՏԸ՝ ԸՍՏ ՍՈՍՅՈՒՐԻ ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ. ՆՇԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԴԵՐԻ ՄԻՋՏԵՔՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ (ԱՐՄԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՑՈՒ «ԱՐԾԱԹԵ ԴԱՐՊԱՍ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Այս ենթագլխում քննարանվել են Ֆերդինանդ դը Սոսյուրի նշանագիտության հիմնական դրույթները՝ նշանի երկբաղադրիչ կառուցվածքը (նշանակիչ / նշանակյալ), ինչպես նաև այն գաղափարը, որ իմաստը ձևավորվում է նշանների փոխհարաբերությունների համակարգում:

Ներկայացվել է՝ ինչպես է գեղարվեստական տեքստը կառուցվում որպես նշանային համակարգ. այս մոտեցմամբ յուրաքանչյուր տարր իմաստավորվում է իր ներքին կառուցվածքով, ինչպես նաև այլ տեքստերի, մշակութային կոդերի և պատմական հիշողության հետ ունեցած կապերով: Այս համատեքստում ինտերտեքստը փոխազդեցության դաշտ է, որտեղ նախատեքստերը իմաստաստեղծ գործոններ են. դրանք ակտիվացնում են հավաքական հիշողությունը և ձևավորում բազմաշերտ իմաստային տարածք:

Սոսյուրի տեսության հիման վրա Արմեն Հայաստանցու «Արծաթե դարպաս» պատմվածքի քննությունը ցույց է տալիս, որ միջտեքստային կապերն ստեղծվում են երեք մակարդակներում՝ թեմատիկ, սյուժետային և նշանային, որտեղ միջտեքստային նշանները դառնում են պատմական և մշակութային հիշողության կոդերի կրողներ ու փոխանցողներ:

1.3. ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս ենթագլխում քննվել են հետմոդեռնիզմի գաղափարական և գեղագիտական հիմքերը՝ որպես մոդեռնիզմին հակադրվող համակարգ, որտեղ մերժվում են հեղինակի դերը, բացարձակ ճշմարտության և կայուն իմաստի գաղափարները: Ցույց է տրվել, որ հետմոդեռնիստական աշխարհում իրականությունն ընկալվում է որպես նշանների և կոդերի համակարգ, որտեղ իմաստը, «վստահելի» իրականությունը ցրված, կորսված են: Տեքստը բազմաշերտ նշանային հյուսվածք է, որի կառուցման հիմնական սկզբունքը միջտեքստայնությունն է:

Անդրադարձ է կատարվել հետմոդեռնիզմի առանցքային հատկանիշներին՝ խաղարկայնությանը, հեգնանքին, դեկոնստրուկցիային, ֆրագմենտացիային, բազմակարծությանը և ոճերի համադրությանը, որոնք ներկայացվել են՝ ըստ Իհաբ Հասանի դասակարգման: Քննաբանվել է Ռոլան Բարտի մոտեցումը, ըստ որի՝ տեքստը պետք է ընկալել ոչ թե որպես փակ արդյունք, այլ ընթացիկ գործընթաց, որտեղ իմաստը ձևավորվում է տարբեր տեքստերի և մշակութային կոդերի փոխհարաբերությունների մեջ:

1.3.1. ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԷՊՈՍԸ ՎԻՊԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ. ԲԱԽՏԻՆԻ, ԼԱԽՄԱՆԻ ԵՎ ԲԱՐՆԵԹԻ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ (ԼԵՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ «ՄՀԵՐԻ ԴՌԱՆ ԳԻՐՔԸ»)

Որպես նախորդ ենթագլխի շարունակություն՝ հետազոտության այս հատվածում քննվել է միջտեքստայնության դերը էպոսի վիպականացման գործընթացում՝ հիմնվելով Բախտինի երկխոսության, ինչպես նաև Լախմանի և Բարնեթի տեսական մոտեցումների վրա:

Ներկայացվել է, թե ինչպես է էպոսը՝ որպես ավանդական ժանր, միջտեքստային մեխանիզմների միջոցով վերածվում ժամանակակից վեպի՝ պահպանելով իր նախատեքստային հիմքը, սակայն միաժամանակ ենթարկվելով վերաիմաստավորման: Լևոն Խեչոյանի «Մհերի դռան գիրքը» ստեղծագործության օրինակով ցույց է տրվել, որ էպոսի սյուժեն, կերպարները և մոտիվները վերափոխվում են՝ պատմամշակութային նոր համատեքստում ձեռք բերելով բազմաշերտ և բազմաձայն կառուցվածք:

Անդրադարձ է արվել Բախտինի՝ «վեպի բազմաձայնության» գաղափարին, ըստ որի՝ տարբեր ձայներ և խոսույթներ միահյուսվում են տեքստում՝ ձևավորելով երկխոսության տարածք: Բախտինի տեսության համաձայն՝ վեպը ժանրային առումով բաց, զարգացող համակարգ է, որը կարող է ընդգրկել այլ ժանրեր, մինչդեռ էպոսը փակ է: Այս տեսանկյունից Խեչոյանի վեպը դինամիկ տարածք է, որում էպոսը կորցնում է իր «բացարձակ

անցյալի» փակվածությունն ու վերածվում վերաշարադրվող, մեկնաբանվող բաց տարածքի: Այդպիսով՝ միջտեքստայնությունը դառնում է ժանրային փոխակերպման մեխանիզմ:

Քննաբանվել է Ռենատե Լախմանի՝ «տեքստի հիշողության» հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս բացատրելու, թե ինչպես է Խեչոյանն ակտիվացնում մշակութային հիշողությունը:

Լեոն Բարնեթի «մշակութային շարունակականության» գաղափարի շրջանակում Խեչոյանի վեպը կարելի է դիտարկել որպես կամուրջ անցյալի և ներկայի միջև: Էպոսային և ժամանակակից իրականությունների համադրումն ստեղծում է շարունակականության տպավորություն, որտեղ ազգային ինքնությունը ներկայացվում է ոչ թե ավարտված, այլ ձևավորվող, ընթացիկ գործընթաց:

Այսպիսով՝ «Միերի դռան գիրքը» վեպում միջտեքստայնությունը էպոսը վիպականացնելու միջոց է, որը նաև բացահայտում է էպոսի ու վեպի միջև առկա խորքային հակադրությունը՝ ցույց տալով, որ ցանկացած միջտեքստային ներթափանցում ունի իր սահմանները: Թեև վեպը փորձում է վերաշարադրել և «բացել» էպոսը, ստեղծագործության վերջում կրկին հաստատվում է դրա փակ բնույթը՝ ցույց տալով միջտեքստայնության երկակի բնույթը. այն կարող է միաժամանակ և՛ կամրջել, և՛ սահմանափակել:

1.4. ՀԵՏՄՈԴԵՌՆԻԶՄԸ՝ ԸՍՏ ԼԻՆԴԱ ՀԱԹՉՈՆԻ

Առաջին գլխի այս հատվածում քննվել է հետմոդեռնիզմի վերաբերյալ կանադացի տեսաբան Լինդա Հաթչոնի մոտեցումը, ըստ որի՝ այն ապակենտրոն, բազմաշերտ և գաղափարապես բարդ համակարգ է, որի առանցքում գտնվում է միջտեքստայնությունը: Ի տարբերություն Յուլյա Կրիստևայի և Ռոլան Բարտի՝ Հաթչոնը միջտեքստայնությունը դիտարկում է ոչ միայն գեղագիտական, այլ նաև քաղաքական հարթության մեջ՝ այն ընկալելով որպես «մշակութային իշխանության կառուցվածքները» բացահայտող և քննադատող մշակութային գործիք: Ըստ Հաթչոնի՝ «մշակութային իշխանության կառուցվածքներ» հասկացությունը վերաբերում է այն մեխանիզմներին, որոնց միջոցով որոշվում է, թե որ տեքստերն են դառնում կանոնական, որ հեղինակներն են ստանում հեղինակություն, և որ ժանրերն են համարվում «բարձր» կամ «ցածր»: Այս իմաստով միջտեքստայնությունը դադարում է «անմեղ» գեղարվեստական հնարք լինելուց. յուրաքանչյուր հղում ընտրություն է և գաղափարական դիրքորոշում:

Ըստ Հաթչոնի տեսության՝ առանձնացվել և քննաբանվել են գեղարվեստական հետևյալ տեխնիկաները՝ *հեգնանք, պարոդիա և մետագեղարվեստա-*

կանություն, պաստիշ, ժամանակային աղավաղում, պարանոյա, փոխակերպում, ֆրագմենտացիա:

Այս բոլոր տեխնիկաները ցույց են տալիս, որ հետմոդեռնիստական տեքստը կառուցվում է բազմաձայն, բազմակոդ, հաճախ հակասական հղումների հիման վրա: Տեքստը դառնում է «խաղարկման դաշտ», որտեղ ընթերցողը ներգրավվում է իմաստների ստեղծման գործընթացում:

1.4. 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՆՏԵՐՏԵՔՍԸ, ՖՐԱԳՄԵՆՏԱՑՎԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԱՆՈՅԱՆ (ԸՍՏ ԳՐԻԳԻ «FRIEDENSDORF» ՎԵՊԻ)

Որպես նախորդ ենթագլխի շարունակություն՝ այստեղ քննվել են պատմական ինտերտեքստի, ֆրագմենտացված իրականության և պարանոյայի փոխկապակցված դրսևորումները Գրիգի «Friedensdorf» վեպում՝ որպես արդի գրականության մեջ պատմության վերաիմաստավորման յուրօրինակ մոդել:

Վեպը կառուցված է բեկորային հիշողությունների, տարբեր աղբյուրներից ներհյուսված ձայների և սուբյեկտիվ ընկալումների համադրմամբ՝ վավերագրելով ոչ թե միասնական պատմություն, այլ փոխկապակցված, բայցև հակասական սյուժեների խճանկար: Այս առումով պատմական ինտերտեքստը և՛ անցյալի հղում է, և՛ դրա քննադատության, վերաշարադրման ու բազմաձայն մեկնաբանության միջոց:

Ֆրագմենտացիան՝ որպես կառուցվածքային ու գաղափարական առանցք և աշխարհայացք, վեպում արտահայտում է ժամանակակից աշխարհի խզվածությունն ու անկայունությունը: Տեքստի բեկորայնությունը, նախադասությունների երկարաշունչ և կետադրությունից զուրկ կառուցվածքը, տարբեր ժամանակային շերտերի միախառնումը և լեզվական խզումներն արտացոլում են փոփոխական ու խառնաշփոթ իրականության մեջ ապրող ժամանակակից անհատի հոգեբանական վիճակը մշտական տագնապի, կորստի և անորոշության պայմաններում:

Վեպում անհատի հույզերը ներկայացնելիս կենտրոնական տեղ է զբաղեցնում պարանոյան, որը ձևավորվում է պատմական փորձառության, պատերազմի և հիշողության ճնշման համադրությամբ՝ դառնալով անհատական և հավաքական գիտակցության բաղադրիչ:

Այսպիսով՝ «Friedensdorf» վեպն իր կառուցվածքային բազմազանությամբ և նորարարական մոտեցումներով վերաիմաստավորում է պատմավեպի ժանրը: Վեպը հրաժարվում է ավանդական, գծային պատումից՝ դառնալով մտքերի, հիշողությունների և փաստական տվյալների «լաբիրինթոս», որտեղ յուրաքանչյուր ֆրագմենտ բեկում է իրականությունը՝ դառնալով ժամանակի

ոգու, պատերազմի տրավմայի և հետպատերազմյան հոգեբանական ճգնաժամի յուրօրինակ վավերագիր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

2.1. ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում քննվել է հետմոդեռնիստական պատմավեպի տեսական-հայեցակարգային հիմքերը, մասնավորապես Լինդա Հաթչոնի առաջադրած պատմագրական մետագեղարվեստականության (historiographic metafiction) տեսությունը: Հստակեցվել է այն հանգամանքը, որ պատմագրական մետագեղարվեստականությունը ջնջում է պատմական փաստի և հորինվածքի միջև ենթադրվող ավանդական սահմանը: Ցույց է տրվել, որ այս մոտեցմամբ պատմությունը սուբյեկտիվ նարատիվ (պատում) է, որը միշտ կառուցվում է լեզվի և տեքստերի միջոցով:

Այս համատեքստում անդրադարձ է արվել հայ գրականության մեջ պատմավեպի զարգացմանը՝ Ռաֆֆու և Մուրացանի ավանդական մոտեցումներից մինչև 1970-ականների նորարարական շրջադարձը (Պ. Զեյթունցյան, Վ. Խեչումյան): Հստակեցվել են պատմագրի, պատմավիպասանի և պատմագրական մետագեղարվեստականության գործառութային տարբերությունները. *Պատմագիրը* ձգտում է վավերականության և փաստագրման, *պատմավիպասանը* կառուցում է սեփական աշխարհը պատմական հիմքի վրա, իսկ պատմագրական մետագեղարվեստականությունը կասկածի տակ է դնում երկուսի հնարավորությունն էլ՝ պնդելով, որ անցյալն ընկալելի է միայն որպես դիսկուրս:

Վերլուծվել է, թե ինչպես է հետմոդեռն տեքստը դառնում աշխարհայացք: Օգտագործելով միջտեքստայնությունը, հեգնանքն ու պարոդիան՝ հեղինակները, պատմությունը ներկայացնելուց զատ, իրենց մոտեցումն ու դիրքորոշումն են արտահայտում պատմական դեպքերի, դեմքերի և առհասարակ պատմություն գրելու ու հիշելու մեխանիզմների շուրջ:

Այսպիսով՝ ենթագլխում հաստատվում է այն մոտեցումը, որ ժամանակակից պատմավեպն ինքնանդրադարձող բարդ կառույց է, որը մարտահրավեր է նետում իրականության ռեալիստական ընկալմանը և ընդգծում պատմության տեքստային բնույթը:

2.2. ՀԵՏՄՈԴԵՌՆԻԶՄ ԵՎ ՀԵՏՀԵՏՄՈԴԵՌՆԻԶՄ. ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԻ ՈՐՈՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Այս ենթագլխում քննվել են հետմոդեռնիզմի և հետհետմոդեռնիզմի (պերֆորմատիզմի) տեսական առանձնահատկությունները՝ հիմնվելով Ռաուլ Էշելմանի հայեցակարգային դրույթների վրա:

Անդրադարձ է կատարվել *հետմոդեռնիստական տեքստի լեզվական շերտերին:* Ըստ Էշելմանի՝ բարբառային և ժողովրդախոսակցական տարրերի ներմուծումը միտված է լեզուն ավելի «նյութական» և պակաս «թափանցիկ» դարձնելուն: Սա ունի քաղաքական ենթատեքստ. որքան բարդ և ոչ համընդհանուր է լեզուն, այնքան այն դժվար է յուրացվում և կառավարվում իշխանական համակարգերի կողմից:

Ենթագլխի կարևորագույն եզրահանգումներից է հետմոդեռնիզմի հաղթահարման փորձը: Պերֆորմատիզմը ներկայացվել է որպես նոր ուղղություն, որը *փորձում է հաղթահարել* հետմոդեռնիստական քանդվածությունն ու հեգնանքը, *որոնում է* նոր անկեղծություն, զգացական խորություն և իմաստ, *ձգտում է* աշխարհի վերակառուցմանը՝ հիմնվելով գիտակցված մոտեցման, այլ ոչ թե անցյալի մեխանիկական հերքման վրա:

Այսպիսով՝ հիմնավորվում է այն միտքը, որ գրականության զարգացումը շարժվում է հետմոդեռնիստական «իմաստի կորստից» և հեգնական խաղից դեպի հետհետմոդեռնիստական իմաստի վերագտնման և գիտակցված պերֆորմանսի դաշտ, որտեղ լեզուն ու պատումը դադարում են սոսկ նշան լինելուց և վերագտնում են իրենց մշակութային-գոյաբանական արժեքը:

2.2.1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏ (ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՐՐՈՐԴԸ» ՎԵՊԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ենթագլխի այս հատվածում քննվել է պատմության կառուցման և իշխանության դիսկուրսի փոխհարաբերությունը Նորայր Սարգսյանի «Հանրապետություններից երրորդը» վեպի օրինակով: Հակադրվելով Ա. Սարգսյանի այն տեսակետին, թե վեպը պերֆորմատիստական է՝ ցույց է տրվել, որ, չնայած առկա պերֆորմատիզմի որոշ տարրերի, վեպը տիպիկ հետմոդեռնիստական է, քանի որ՝

. *սուբյեկտը* ոչ թե փակ ու ինքնաբավ է, այլ կազմալուծված, որոնող և անկայուն,

. *կրկնակի շրջանակումը* ոչ թե հանգեցնում է նույնականացման, այլ, հակառակը, բացահայտում է իրականության սիմուլյացիոն բնույթը,

. *զանցանքի էթիկան* չի հանգեցնում նորի հաստատման, այլ պտտվում է հնի պարբերական շղթայի մեջ:

Վեպում պատմության կառուցումը իշխանության կողմից վերահսկվող ընթացք է, որտեղ առանցքային է սիմուլյակրի գաղափարը (ըստ Բոդրիարի). իրականությունը փոխարինվել է իրականության նշաններով (օրինակ՝ «ֆալշ adidas-ը», «Իթակե» ձկանոցը), որտեղ բնօրինակն ու պատճենն այլևս տարբերակելի չեն:

Ցույց է տրվել, որ վեպը կառուցված է համաշխարհային և ազգային գրականության հղումների վրա, որոնք ենթարկվում են հեգնական պարոդիայի.

. Հոմերոսի «Ոդիսականը» համադրվում է 2020 թ. հետպատերազմյան քաոսի հետ՝ արժեզրկելով վերադարձի և ինքնության դասական կոդերը,

. Չարենցի, Տերյանի և Բակունցի կերպարներն ու տողերը դառնում են միջտեքստային անագրամներ, որոնք ընդգծում են պատմական տրավմաների կրկնվող բնույթը Երրորդ հանրապետության պատմության համատեքստում:

Նորայր Սարգսյանը, /գուցե ակամա/ օգտագործելով պատմագրական մետագեղարվեստականության հնարքները, ստեղծել է մի տեքստ, որտեղ պատմությունը ջնջվում և վերաշարադրվում է իշխող ուժի հսկողության ներքո:

2.3. ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Այս ենթագլխում քննվել է միջտեքստայնության դերը պատմագրական մետագեղարվեստականության ձևավորման մեջ: Պատմագրական մետագեղարվեստականությունը «բացահայտում է», որ պատմական ճշմարտությունը կախված է պատմողի դիրքորոշումից և այն վարչակարգից, որի ներքո այն գրվում է: Միջտեքստայնությունը վերածվում է քննադատական գործիքի, որը տարբեր տեքստերի (փաստաթղթեր, քաղաքական լուրեր, դասական գրականություն, սոցիարթակներ) համադրմամբ և ներհյուսմամբ ստեղծում է բազմաձայն պատկերներ՝ առանց բացարձակ ճշմարտության:

Ըստ Հաթչոնի մոտեցման՝ հետմոդեռնիստական պարոդիան ունի երկակի բնույթ. այն միաժամանակ օգտագործում և չարաշահում է պատմական պայմանականությունները: Պատմական փաստերը ներմուծվում են տեքստ, բայց ենթարկվում են հեգնական վերաիմաստավորման: Ի հակադրություն այն տեսաբանների, որոնք հետմոդեռնիզմը համարում են ապապատմական, Հաթչոնը պնդում է, որ այս ուղղությունը ավելի պատմական է, քանի որ այն հրաժարվում է պատմության «թափանցիկության» պատրանքից և ստիպում է ընթերցողին գիտակցել՝ ինչպես է կառուցվում պատմական գիտելիքը:

Այսպիսով՝ միջտեքստայնության շնորհիվ պատմագրական մետագեղարվեստականությունը դառնում է մի տարածք, որտեղ «փաստը» և «հորինվածքը» հանդիպում են՝ ստեղծելով նոր, բազմաշերտ նարատիվ: Այն սովորեցնում է ըն-

թերցողին թերահավատորեն մոտենալ պաշտոնական պատմություններին և մոտենալ պատմությանը՝ որպես անվերջ վերաշարադրվող տեքստի:

2. 3. 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ. ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԱՆԳ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ» ՎԵՊՈՒՄ

Այս հատվածում քննվել է Վ. Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպը՝ որպես պատմագրական մետագեղարվեստականության օրինակ: Վեպը բացահայտում է պատմական փաստի հարաբերականությունը պատմական փաստաթղթերի իմիտացիայի, հետադարձ հայացքի և այլ հնարքների միջոցով:

Վեպը մետագրական պատմագեղարվեստականություն կամ մետապատմավեպ համարելու համար բերվել են հետևյալ փաստարկները.

. անավարտություն. մերժվում է դասական հանգուցալուծումը,

. բազմաձայնություն. պատմությունը պատմվում է տարբեր սերունդների և հակադիր դիրքորոշումների խաչմերուկում,

. քննական մոտեցում. հարցականի տակ է դրվում անցյալը և դրա ներկայացման ձևերը:

Այսպիսով՝ Վ. Գրիգորյանն ստեղծել է մի տեքստ, որտեղ պատմությունը կենդանի, ցավոտ և մշտապես վերաիմաստավորվող տարածություն է, որտեղ «կարմիր Մոսկվան կաշին չի փոխում», բայց անհատը ձեռք է բերում քննական գիտակցություն:

2.3.2. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՈՒՄԸ. ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏԸ» ՎԵՊԸ՝ ԸՍՏ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Այստեղ քննվել է, թե ինչպես է Վ. Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպում կառուցվում պատմությունը, իսկ հիշողությունը պայքարում է մոռացության ու քաղաքական կեղծիքի դեմ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վեպը կառուցված է պատմության և գրականության փոխազդեցության այնպիսի հարթության վրա, ուր անցյալը վերաիմաստավորվում է բազմաշերտ խոսույթների, տարբեր աղբյուրներից ներմուծված փաստագրական նյութերի, սուբյեկտիվ պատմությունների համադրմամբ:

Պատմագրական մետագեղարվեստականության տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի վեպի ինքնահղման և շրջանակված կառուցվածքը, որի միջոցով գրականությունն անդրադառնում է իր իսկ ստեղծման գործընթացին: Այս մեթոդը ընդգծում է պատմության պայմանականությունը՝ կասկած հարուցելով ներկայացված նարատիվների «ճշմարտացիության» նկատմամբ:

Հեգնանքն ու պարոդիան քննադատական գործիքներ են, որոնց միջոցով հեղինակն ապամոնտաժում է պաշտոնական պատմագրության հաստատված ձևերը՝ բացահայտելով դրանց ներքին հակասությունները և գաղափարական ենթատեքստերը:

Այսպիսով՝ գրականությունը դառնում է այն հիմնական տարածքը, որտեղ հնարավոր է վերաիմաստավորել անցյալը և դիմակայել դրա խեղաթյուրման կամ մոռացման վտանգին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՀՂՈՒՄՆԵՐԻ ՀԵՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

3.1. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԻՆՏԵՐՏԵՔՍՏԻ ԴԻՍԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ (ԱՐՓԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ «ՉԻ ՎԱՃԱՌՎՈՒՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Այս գլխի ենթագլուխներում քննվել են աստվածաշնչյան, մշակութային և այլ հղումների գործառութային նշանակությունը հետմոդեռնիստական տեքստերում:

Արփի Ոսկանյանի «Չի վաճառվում» պատմվածքների ժողովածուի վերլուծությամբ անդրադարձ է արվել աստվածաշնչյան ինտերտեքստի վախճանաբանական (էսխատոլոգիական) շրջմանը: Վերլուծությունը հենվել է Ֆրանկ Քերմոդի՝ վախճանաբանական շրջման և Ալեքսեյ Տատարինովի՝ «ապոկրիֆի իշխանության» տեսությունների վրա:

Եթե հավատացյալ աշխարհում Քրիստոսի գալուստը կապվում է փրկության հետ, ապա Ա. Ոսկանյանի «Երկրորդ գալուստը» պատմվածքում Քրիստոսի գալուստը խուճապի և բռնության ազդակ է, իսկ «ապակե աչքերը» և «սքեմները»՝ կեղծ սրբության ու հոգևոր դատարկության խորհրդանիշներ:

«Մինչև աքաղաղի կանչելը» պատմվածքի վերնագիրը հղում է Պետրոսի ուրացությանը: Աստծո դատաստանը փոխարինված է իշխանական եռյակով (նախագահ-դատախազ-կաթողիկոս), իսկ վերջաբանը շրջված է. «Նույնիսկ աքաղաղը չկանչեց»: Սա նշանակում է, որ ուրացումը տեղի է ունեցել, բայց զղջման և ճշմարտության պահը այդպես էլ չի եկել:

«Ողջերին թող թաղեն ողջերը» պատմվածքի վերնագիրը ավետարանական «թող մեռելները թաղեն իրենց մեռելներին» խոսքի շրջումն է: Պատմվածքի հիմնական գաղափարն այն է, որ ժամանակակից աշխարհում (սոցցանցեր, վիրտուալ կյանք) մարդիկ տարբերվում են միայն իրենց «մեռածության աստիճանով»:

«Բամբասանքն էր ի սկզբանե» պատմվածքի վերնագիրը Հովհաննեսի Ա-վետարանի «Ի սկզբանե էր Բանը» հանրահայտ տողի դեկոնստրուկցիան է: Խոսքը փոխարինվել է բամբասանքով: Բամբասանքը բխում է հենց Հիսուսի պատկերից, ինչը նշանակում է, որ անգամ սրբազանը այլևս չի դատում կամ կարգավորում աշխարհը, այլ մասնակից է դրա քայքայմանը:

Վերը նշված պատմվածքներում արտացոլված է տիրող արժեքային ճգնաժամը. աստվածաշնչյան լեզուն օգտագործվում է ժամանակակից հասարակության բարոյական անկումը ցույց տալու համար:

3. 2. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԻՆՏԵՐՏԵՔՍՏԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՄԵՏԱՖՈՐ (ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆԻ ԵՎ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Այս ենթաբաժնում քննվել են Արարատ Գյուլբանգյանի և Գուրգեն Խանջյանի ստեղծագործություններում աստվածաշնչյան ինտերտեքստի կիրառության սկզբունքներն ու գործառույթները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ աստվածաշնչյան ինտերտեքստը երբեմն դառնում է հասարակության կառավարման մեխանիզմները քննադատելու գործիք:

Արարատ Գյուլբանգյանը «301 գրամ» ստեղծագործության մեջ միահյուսում է գիտությունը, կրոնը և էրոտիկան՝ կառուցելով բարդ միջտեքստային հյուսվածք, որտեղ Մեծ պայթյունը համեմատվում է առաջին սեռական ակտի հետ: Հեղինակը զուգահեռ է անցկացնում Տիեզերքի առաջացման գիտական վարկածի և Ծննդոց գրքի դրախտային նարատիվի միջև: Դրախտից արտաքսումը կամ «մեղքը» վերակոդավորվում է որպես մարմնական ցանկություն: Ստեղծելով ժանրային կոլաժ՝ հեղինակն օգտագործում է իրավաբանական տեղեկանքներ, բժշկական ախտորոշումներ և հեռուստատեսային հարցազրույցներ, ինչը ձևավորում է հետմոդեռնիստական խաղ՝ ցույց տալով, որ գիտությունն ու իրավունքը նույնպես առասպելաստեղծ են:

Այս համատեքստում է քննվել նաև Գուրգեն Խանջյանի «Համբերություն քեզ, մարդ» ստեղծագործությունը: Խանջյանի մոտ աստվածաշնչյան ինտերտեքստը դառնում է էքզիստենցիալ թակարդի պատկեր: Աշխարհը մի որսատեղի է. եղեմից վտարվելուց հետո մարդու կյանքը ներկայացվում է որպես անվերջ որս: Ծնվելը ոչ թե ազատություն է, այլ «թակարդների լարում»: Հեղինակը միևնույն շարքում է դնում հոգևոր առաջնորդներին (Հիսուս, Մուհամեդ, Բուդդա) և աշխարհը կառավարած/կառավարող հայտնի գաղափարախոսությունները (կոմունիզմ, դեմոկրատիա, Նիցշե)՝ ստեղծելով գաղափարական աղմուկ: Նրանք խոսում են հրամայական եղանակի բայերով՝ «Արի՛», «Լսի՛ր»՝ ընդգծելով մարդուն կառավարելու նպատակը: Սրբազան կարգախոսները («Ազգը վեր է ամեն ինչից») հավասարեցվում են բանտին, հրացանին և թմրանյութերին: Սա ցույց է տալիս, որ համակարգը օգտագործում է ամեն ինչ մարդուն «նորմալացնելու» և զոհաբերելու համար:

Այսպիսով՝ երկու հեղինակներն էլ աստվածաշնչյան նախատեքստը վերածում են «քննադատական ասպարեզի», որտեղ ժամանակակից քաղաքակրթությունը մարդկության կառավարման մի մեծ մեքենա է:

3.3. ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ. ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ ԿՈԼԱԺՆԵՐԸ

Գուրգեն Խանջյանի կոլաժների քննությունը բացահայտում է միջտեքստայնության նոր մակարդակ:

«Կոլաժ բլյուզ» գործում հեղինակը, համադրելով տարբեր ծագման նշաններ (Տիբեթ-Ալագյազ, Մոլոս-Գամփռ), ստեղծել է տեքստի հուզական ռիթմ՝ ընդգծելով ողբերգական կրկնությունները ինքնության որոնման ճանապարհին:

«Տունդարձի կոլաժում» միֆի և իրականության բախման, միֆաքայքայման միջոցով հեղինակը ստեղծել է հակադրության դաշտ, որտեղ հայտնի հերոսներն ու աստվածները (Պոսեյդոն, Ուլիսես) դրվել են ժամանակակից աղբի և կենցաղային իրերի կողքին (ջարդված շիշ, «Կիլկա» պահածո, լվացված կրպակ): Կարուսելի պտույտը, որը պիտի լիներ կյանքի հավերժական շարժը, իրականում անշաչժ է, մինչդեռ շարժումն է գոյության պայմանը:

«Մարգագետնային կոլաժում» նկատելի են յունգյան արքետիպերը. Մարգագետինը երկրագունդը կամ տիեզերքն է, որտեղ գիտակցությունը տրոհված է, իսկ բեկորները «ֆոֆռում են», ինչպես էլեկտրոնները միջուկի շուրջ: Բնազդայինի և բանականության խորհրդանիշներն են գազանանոցն ու գրադարանը: Գազանանոցի տեղակայումը գրադարանի ներքնահարկում հղում է կոլեկտիվ անգիտակցականին: Աստծո մահվան պատկերը նիցշեական գաղափարների արտահայտություն է («Հանգիստ թող Աստծու դին»), որը փաստում է հերոսի հոգևոր ամայությունը:

«Կոլաժ Զեմֆիրայի մասին» և «Կոլաժ խեղճիկի համար» գործերում հեղինակը դիմում է լեզվական փոխակերպման՝ Զեմֆիրայի երգերի տողերը կտրելով փոփ-մշակութային համատեքստից և դարձնելով քաղաքական ու սոցիալական մետաֆորներ (օրինակ՝ մետրոն որպես ստորգետնյա վերահսկվող տարածք): Իշխանական վերահսկողության հետևանք է մարդու արժեզրկումը և նրա վերածումը «մսի»:

Շեքսպիրի և Գյոթեի էքզիստենցիալ հարցադրումներին փոխարինելու են գալիս գիտական ($E=mc^2$) բանաձևերը, որոնք խորհրդանշում են մարդու գոյության սառը, տեխնիկական հաշվարկը:

Այսպիսով՝ Խանջյանի կոլաժները ստեղծում են մի բազմաշերտ դաշտ, որտեղ գրականությունը, մշակույթն ու գիտությունը այդպես էլ չեն օգնում մարդուն փրկություն գտնելու հարցում: Մարդը (խեղճիկը) մնում է միայնակ իր «ծովի» հետ՝ պաշարված աշխարհաքաղաքական և գաղափարական խաղերով:

3.4. ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԻՆՏԵՐՏԵՔՍՏ

Այս ենթաբաժնում քննվել է, թե Արարատ Գյուլբանգյանն ինչպես է արտագեղարվեստական տարրերը (ֆիզիկամաթեմատիկական, բժշկական, համացանցային և շախմատային) կիրառում որպես ինտերտեքստ: Հեղինակը սերը և մարդկային ճակատագիրը վերլուծում է աքսիոմների միջոցով:

Պոմպեյի «կախարդական քառակուսին» (SATOR AREPO TENET OPERA ROTAS) խորհրդանշում է հավերժական շարժումը և ճակատագրի կրկնությունը: Համացանցը (մասնավորապես՝ Facebook-ը) դիտարկում է որպես ժամանակակից աշխարհի ամենամեծ ինտերտեքստը, որտեղ քրոնոտոպը ձևավորվում է մեկնաբանությունների հարահոսով: «PARACETAMOL» գործում սոցիալական հարթակը վերածվում է շախմատային տախտակի, որտեղ յուրաքանչյուր օգտատեր (Գրոսմայստեր, Բանաստեղծ, Տիկին Նեո) խաղաքար է: Խաղի ընթացքը բացահայտում է աշխարհի կառավարման և անհատի դիմադրության բախումը, որտեղ մեկնարկային քայլը՝ «E2-E4»-ը, էքզիստենցիալ փակ շրջան է: Համացանցային տարածքը նմանվում է մի հետմոդեռնիստական վեպի, որը գրվում է ինքն իրեն՝ ջնջելով գեղարվեստականի և իրական կյանքի սահմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապելով տեսական շրջանակը և գործնական վերլուծությունները՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Միջտեքստայնությունը հետմոդեռնիստական տեքստի կառուցման հիմնական միջոցներից է, որը ծառայում է մշակութային կոդերի, պատմական հիշողության և գաղափարախոսական շերտերի փոխանցմանը:

2. Ֆերդինանդ դե Սոսյուրի նշանագիտությունը, բացահայտում է տեքստի կառուցվածքային ու նշանային համակարգերը, և այդ մոտեցումը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է յուրաքանչյուր նշան՝ բառ, սիմվոլ կամ կերպար, խորհրդանշում կամ բացահայտում պատմական, մշակութային և գաղափարական շերտեր:

3. Ժերար Ժենետի տեսությունն ընդգրկում է տրանստեքստուալ հարաբերությունների ամբողջ համակարգը՝ ներառելով միջտեքստայնությունը, պարատեքստայնությունը, արքետեքստայնությունը, մետատեքստը և հիպերտեքստայնությունը: Նրա մոտեցումը ցույց է տալիս, որ տեքստը երբեք ինքնաբավ կամ մեկուսացված չէ. այն տեղավորված է տեքստերի, ժանրերի և տեքստային շերտերի լայն ցանցում:

4. Միջտեքստայնության ընկալման և մեկնաբանության համար գրականագիտության մեջ որոշիչ են հետևյալ հարցերը. ո՞ր նշաններն են ազդարարում ինտերտեքստը, ո՞ր կատեգորիաները կարող են օգնել նկարագրել այն, ի՞նչ գործառույթ է իրականացնում ինտերտեքստը: Միջտեքստայնությունը,

գեղարվեստական հնարք լինելուց զատ, նաև լեզվական-ճանաչողական պրակտիկա է, աշխարհայացք և աշխարհը ներկայացնելու յուրօրինակ գեղարվեստական գործիք:

5. Հետմոդեռնիստական գրականությունը օգտագործում է ֆրագմենտացիա, պարոդիա, բազմաշերտ պատմականության կառուցում և միջտեքստային հղումներ՝ ընթերցողի գիտակցությունն ակտիվացնելու և ուշադիր ընթերցանություն ապահովելու համար: Գրիգը, փորձելով ներդաշնակել պատումի քաոսայնությունն ու մարդկանց ներսում առկա խառնաշփոթը տեքստի լեզվի հետ, դիմում է ֆրագմենտցիայի. ընտրում է գերկենտրոնացված ընթերցում պահանջող տեքստային այնպիսի միջոցներ, ինչպիսիք են, օրինակ, շարահյուսական միավորների փոխներթափանցումը, կետադրական կանոնների անտեսումը կամ էլիպսիսը, որոնց միջոցով ընթերցումը դառնում է ոչ գծային, կենտրոնախույս գործընթաց:

6. Բախտինի երկխոսության տեսությունը ցույց է տալիս, որ տեքստը երբեք ինքնաբավ չէ. այն միշտ ներառում է բազմաձայնություն՝ ձայներ, տեսակետներ, ժանրեր, հասարակական կարծիքներ, որոնք տեքստային տարածքում մշտապես երկխոսության մեջ են իրար հետ: Բախտինի կարծիքը էպոսի բացարձակ ավարտվածության և փակ շրջան լինելու մասին հիմնավորվում է Լևոն Խեչոյանի ստեղծագործության քննության օրինակով:

7. Հետմոդեռնիստական պատմավեպը՝ մետապատմավեպը, կառուցվում է մետագեղարվեստական տարրերի՝ պատմական փաստաթղթերի, պարբերականների, մամուլի, արխիվային կամ համացանցային նյութերի, ընտանեկան պատմությունների և փաստական այլ աղբյուրների միջոցով՝ ակտիվացնելով տարբեր իրողությունների միջև կապեր տեսնելու և այդ կապերի էության մեջ խորամուխ լինելու, նոր ճշմարտություններ որոնելու ընթերցողական հմտությունները:

8. Ժամանակակից պատմագրական արձակում պատմությունը դառնում է ներկան վերաիմաստավորելու միջոց, իսկ վիպական տարածքը՝ գրականության ու վավերականության սահմանները քայքայող, սինթեզող բանավիճելի հարթություն: Մետագրական կառուցվածքով երկերն ուղղված են անցյալի կեղծիքը բացահայտելուն, հիշողության վերականգնմանը և ինքնության ճգնաժամի հաղթահարմանը:

9. Աստվածաշնչյան ինտերտեքստը գեղարվեստական տիրույթում ունի հոգևոր, մշակութային դիսկուրսների փոխանցման, ինչպես նաև իմաստաստեղծ գործառույթ: Հատկապես կարևոր է նրա վախճանաբանական (էսկատոլոգիական) գործառույթը: Աստվածաշնչյան ինտերտեքստը հաճախ ուղղորդում է տեքստը դեպի «վերջի», դատաստանի, փրկության կամ կործանման թեմատիկա՝ ստեղծելով լարված, երբեմն պարանոյիկ իրականության պատկեր:

10. Կոլաժային և կյանքի տարբեր ոլորտների ինտերտեքստային հղումներն ընդլայնում են տեքստի հնարավորություններն ու ասելիքը՝ տեքստային

տարածք բերելով գեղանկարչության, կոլաժի, համացանցի, շախմատի, ֆիզիկամաթեմատիկական բանաձևերի ու նշանների օգնությամբ ասելիք ու գաղափարներ փոխանցելու նոր մշակույթ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Հակոբյան Հ.**, Պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը՝ իբրև հետմոդեռն պատմավեպի քննության մեթոդաբանություն, «Բանբեր Երևանի համալսարանի» 1 (49), Երևան, 2026, էջ 50-60:
2. **Հակոբյան Հ.,** Միջտեքստայնությունը՝ որպես էպոսը վիպականացնելու միջոց (ըստ Լևոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը» ստեղծագործության), «Հայագիտական հանդես», 3 (70), Երևան, 2025, էջ 24-47:
3. **Հակոբյան Հ.**, Աստվածաշնչյան ինտերտեքստի դիսկուրսային գործառույթները և վախճանաբանական շրջումը արդի հայ արձակում (Արփի Ոսկանյանի «Չի վաճառվում» ժողովածուի օրինակով), «Վէմ» համահայկական հանդես, Թիվ 1 (93), Երևան, 2026, էջ 100-116:
4. **Հակոբյան Հ.,** Պատմագրական մետագեղարվեստականությունը Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպում, «Գրականագիտական հանդես», ԻԸ, Երևան, 2024, էջ 104-113:
5. **Հակոբյան Հ.**, Կոլաժը՝ որպես միջտեքստայնության եղանակ (ըստ Գուրգեն Խանջյանի կոլաժների), «Հայագիտական հանդես», 2 (65), Երևան, 2024, էջ 217-231:
6. **Հակոբյան Հ.,** Պատմագրական մետագեղարվեստականությունը Վահագն Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպում, «Գրականագիտական հանդես», № 1, Երևան, 2026, էջ 50-66:
7. **Հակոբյան Հ.,** Միջտեքստայնությունը և պատմագրական մետագեղարվեստականությունը Վահագն Գրիգորյանի երկերում: Մենագրություն, Երևան: Հեղ. հրատ., 2025, 224 էջ:

АСМИК АКОБЯН

ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПРОЗЕ (2000-Е ГОДЫ)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 01. 04 - «Теория литературы».

Защита диссертации состоится 29 июня 2026 г. в 12^{00} на заседании специализированного совета литературоведения 012 ВАК РА действующего при Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван, ул. Абовяна $52^{а}$, корпус факультета армянской филологии ЕГУ, 202 аудитория.

Резюме

Актуальность темы. Современный художественный текст строится на взаимодействии с другими текстами и требует от читателя культурного и интерпретационного опыта. Интертекстуальные включения нередко изменяют исходный смысл заимствованного текста в зависимости от автора, цели и исторического контекста, что делает интертекстуальность ключевым механизмом современного литературного мышления.

Цели и задачи исследования. Цель — комплексное исследование интертекстуальности в современной армянской прозе, выявление её функций, типологии и роли в реконструкции исторической памяти и идентичности. Задачи:

— представить понятие интертекстуальности и его теоретические основы, включая историографическую метапрозу;

— проанализировать взаимодействующие тексты и степень трансформации претекста;

— рассмотреть соотношение исторического факта и его художественного отражения;

— выявить связь истории, литературы и индивидуального опыта;

— обосновать теорию анализом армянской прозы 2000-х годов.

Степень изученности темы. Термин «интертекстуальность» введён Юлией Кристева (1967) на основе идей Мишеля Фуко и Михаила Бахтина. Юрий Лотман выделил функции претекста (катализатор смысла, трансформация значения, незаметность). Ролан Барт акцентировал роль читателя («смерть автора»), его подход поддержали Линда Хатчеон, Риффатер, Умберто Эко. Жерар Женетт разработал типологию интертекстуальности.

В армянском литературоведении проблему исследовали Ж. Калантарян, Г. Гирунян, Е. Этарян, А. Бекмезян-Семирджян, Н. Амбарцумян, А. Никогосян и др.

Научная новизна работы.

— интертекстуальность рассматривается как стратегия формирования исторической памяти и идентичности;

— применяется теория историографической метафикции Линды Хатчеон;

— интертекст трактуется как способ переосмысления травматической истории и выполняет свидетельскую функцию;

— предложена типология интертекстуальных слоёв (историографический, автобиографический, фольклорный, металингвистический).

Методология диссертации. Работа основана на диалоге поэтики, герменевтики, феноменологии и социологии. Используется феноменологическая герменевтика Поля Рикёра. Социологический подход и теория новой историчности трактуют текст как исторический феномен, а историю — как текстуальную конструкцию. Применяются интертекстуальный, нарративный и сравнительно-исторический анализы, теория постпамяти Марианны Хирш.

Практическая значимость. Результаты могут использоваться в вузовских курсах по литературе и теории литературы, а также в научных исследованиях и школьном преподавании.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трёх глав, заключения и списка литературы. Первая глава («Исторические и теоретические основы интертекстуальности, особенности постмодернизма») включает четыре подраздела, вторая («Интертекстуальность как механизм историографической метапрозы») — три, третья («Постмодернистские прочтения библейских, культурных и иных аллюзий») — четыре (179 стр.).

Во введении представлены актуальность темы, цели и задачи, история вопроса, научная новизна и методология исследования.

Первая глава посвящена формированию и развитию теории интертекстуальности от её философских оснований до проявлений в современной литературе, а также её осмыслению в контексте постмодернизма. В ней интертекстуальность рассматривается через семиотический подход Фердинанда де Соссюра как система взаимодействующих знаков, на примере рассказа Армена Айастанци показывается её роль в конструировании исторической памяти и культурных кодов. Далее, опираясь на теорию диалогизма Михаила Бахтина, анализируется противопоставление эпоса и романа и демонстрируется, как в романе Левона Хечояна национальный эпос переосмысливается посредством интертекста. В рамках концепции Линды Хатчеон интертекстуальность ներկայացվում է որպես постмодернистский

механизм саморефлексии и критического осмысления истории, где размываются границы между художественным и историческим. Также рассматривается связь исторического интертекста с фрагментированной реальностью и паранойей, что отражает нестабильность и кризис современного сознания.

Во второй главе интертекстуальность исследуется как механизм историографической метафикции и средство художественного переосмысления истории, где прошлое трактуется как текстуальная конструкция, объединяющая факт и вымысел. Анализ показывает различие между постмодернизмом, сосредоточенным на игре смыслов и сомнении, и постпостмодернизмом, стремящимся к восстановлению смысла и идентичности, что приводит к изменению функций интертекстуальности.

Третья глава расширяет понимание интертекстуальности, рассматривая её в литературном, культурном, философском и научном контекстах. На примерах произведений Арпи Восканян, Арарата Гюльбангяна и Гургена Ханджяна показано, что библейские отсылки приобретают экзистенциальное значение и связаны с вопросами идентичности, страдания и спасения. Также анализируется взаимодействие литературы и живописи, где интертекст проявляется на визуальном уровне, и исследуются отсылки к различным сферам знания — от научных формул до интернет- и шахматных кодов, что демонстрирует интертекстуальность как многогранную форму современного мышления.

В разделе заключения нами представлены такие выводы, к которым мы пришли в результате проведенного исследования.

Диссертация завершается списком использованной литературы.

HASMIK HAKOBYAN

INTERTEXTUALITY IN CONTEMPORARY ARMENIAN PROSE (2000S)

Dissertation to obtain the degree of a Candidate of Philology. Field of specialization: 10. 01.04 – Literary Theory.

The defense of the dissertation will take place on June 29th, 2026 at 12^{00} p.m., at the HQC (Higher Qualification Committee) Specialized Counsil 012 of "Literature Studies" at Yerevan State University (YSU).

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

Summary

Significance of the Topic. Modern literary text is constructed through interaction with other texts and requires the reader to possess cultural and interpretative experience. Intertextual inclusions often alter the original meaning of the borrowed text depending on the author, purpose, and historical context, which makes intertextuality a key mechanism of contemporary literary thinking.

Aims and objectives of the research. The aim is a comprehensive study of intertextuality in contemporary Armenian prose, identifying its functions, typology, and role in the reconstruction of historical memory and identity. The objectives are:

— to present the concept of intertextuality and its theoretical foundations, including historiographic metafiction;

— to analyze interacting texts and the degree of transformation of the pretext;

— to examine the relationship between historical fact and its artistic representation;

— to reveal the connection between history, literature, and individual experience;

— to substantiate the theory through the analysis of Armenian prose of the 2000s.

Degree of Study of the Topic. The term "intertextuality" was introduced by Julia Kristeva (1967) based on the ideas of Michel Foucault and Mikhail Bakhtin. Yuri Lotman identified the functions of the pretext (a catalyst of meaning, transformation of meaning, invisibility). Roland Barthes emphasized the role of the reader ("the death of the author"), and his approach was supported by Linda Hutcheon, Riffaterre, and Umberto Eco. Gérard Genette developed a typology of intertextuality.

In Armenian literary studies, the problem has been explored by Zh. Kalantaryan, G. Girunyan, E. Etaryan, A. Bekmezian-Semirdzhyan, N. Hambartsumyan, A. Nikoghosyan, and others.

Scientific novelty of the study. — intertextuality is considered as a strategy for forming historical memory and identity;

— the theory of historiographic metafiction by Linda Hutcheon is applied;

— intertext is interpreted as a way of rethinking traumatic history and performs a testimonial function;

— a typology of intertextual layers is proposed (historiographic, autobiographical, folkloric, metalinguistic).

Methodology of the research. The work is based on the dialogue of poetics, hermeneutics, phenomenology, and sociology. The phenomenological hermeneutics of Paul Ricoeur is used. The sociological approach and the theory of new historicism interpret the text as a historical phenomenon and history as a textual construction. Intertextual, narrative, and comparative-historical analyses are applied, along with Marianne Hirsch's theory of postmemory.

Practical Significance of the Dissertation. The results can be used in university courses on literature and literary theory, as well as in scholarly research and school teaching.

Structure of the Dissertation. The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, and a bibliography. The first chapter ("Historical and Theoretical Foundations of Intertextuality, Features of Postmodernism") includes four sections; the second ("Intertextuality as a Mechanism of Historiographic Metafiction") includes three; and the third ("Postmodern Readings of Biblical, Cultural, and Other Allusions") includes four (179 pages).

The introduction presents the relevance of the topic, the aims and objectives, the history of the issue, the scientific novelty, and the research methodology.

The first chapter is devoted to the formation and development of the theory of intertextuality` from its philosophical foundations to its manifestations in contemporary literature, as well as its interpretation in the context of postmodernism. In it, intertextuality is examined through Ferdinand de Saussure's semiotic approach as a system of interacting signs; the example of Armen Ayastantsi's short story demonstrates its role in constructing historical memory and cultural codes. Further, based on Mikhail Bakhtin's theory of dialogism, the opposition between epic and novel is analyzed, and it is shown how Levon Khechoyan's novel reinterprets the national epic through intertext. Within Linda Hutcheon's theoretical framework, intertextuality is conceptualized as a postmodern mechanism of self-reflexivity and critical historiographic interpretation, wherein the boundaries between the aesthetic and the historical are destabilized. Furthermore, the interrelation between historical intertext, fragmented reality, and paranoia is examined, revealing conditions of instability and the broader crisis of modern consciousness.

In the second chapter, intertextuality is studied as a mechanism of historiographic metafiction and a means of artistic reinterpretation of history, where the past is treated as a textual construction combining fact and fiction. The analysis shows the difference between postmodernism, focused on the play of meanings and doubt, and post-postmodernism, which seeks to restore meaning and identity, leading to a change in the functions of intertextuality.

The third chapter expands the understanding of intertextuality, considering it in literary, cultural, philosophical, and scientific contexts. Using examples from the works of Arpi Voskanyan, Ararat Gyulbangyan, and Gurgen Khandzhyan, it is shown that biblical references acquire existential significance and are connected with issues of identity, suffering, and salvation. The interaction between literature and painting is also analyzed, where intertext manifests at the visual level, and references to various spheres of knowledge — from scientific formulas to internet and chess codes — are examined, which demonstrates intertextuality as a multifaceted form of modern thinking.

The conclusion summarizes the findings of the research. The dissertation ends with a list of references.